

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ

Պուլկարիոյ Համար

Տարեկան ֆր. 5
Վեցամս. " 2 1/2

Արտասահման
Տարեկան ֆր. 7
Վեցամս. " 4

ԱՇԽԱՐՀ

Նամակ և դրամ
դրկել խմբագրու-
թեան հասցէին:

Rédaction
du journal
"Achekhar,"
Varna

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

10 ՍԱՆԴԻՄ

ԳՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

10 ՍԱՆԴԻՄ

„ԱՇԽԱՐՀ“Ի ՈՒՂԵԳԻԾԸ


Ընդհանուր շուարումին մէջ, որ աւելի կը սաստկանայ մէկ քանի թերթերու անուղի, աննպատակ ներդործութեամբը՝ և ընդհանուրապէս մաքրանքին մէջ, զոր հանրութիւնը կարտայայտէ պզտիկ, անձնական վէճեր տեսնալով անոնց մէջ, Աշխարհի դերը կարևոր է և մեծ: Անիկա կոչուած է, իր կարող և հմուտ աշխատակիցներուն շնորհիւ, թօթափել թմրութիւնը հայ հասարակութեան, անոր ճանչցնել ինքզինքը, և զանիկա դիտել իր պատմական ուղիին մէջ, ոգևորող դիւթական մագնիսը զգացնել աալով անոր ընկերային յեղափոխութեան փրկարար հեռապատկերին մէջ:

Իր սիւնակները շատ սուղ պիտի ըլլան զբաղելու համար դատարկապօրոյ հակառակորդներու հետ: Աշխարհի խմբագրութեան աչքին անձերը կարևորութիւն չունեն: Գաղափարներու շուրջը պիտի դառնայ միայն իրտական քննադատութեան մաղէն անցնելով զանոնք:

Անկախ միտքերու օսկան, ժողովրդային, էն գիւրամատչելին Պուլկարիոյ Հայ թերթերուն. խրմբագրութիւնս կը սիրէ յուսալ թէ՛ հանրութեան նիւթակննէ՝ և բարոյական քաջալերութիւնները չպիտի դադարին իրեն խթան մը ըլլալէ:

Խմբագրորիւն

ՀԱՅ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԸ ՊԵՆՆԻՍՅԱՆ ՄԷՋ



Պուլկարիոյ Հայութեան Կիսական խնդիրը իր վարժարաններուն հարցն է այսօր: Կարևոր հնոցը պէտք է դառնայ ան, ուր դարբնուի Հայութեան այս փոքրիկ

զանգուածը և պատրաստուի ապագայի մը համար, որուն կարևորութիւնը շեշտած են արդէն հայ ազգը առաջնորդողներէ ոմանք: Ուրիշ կերպ շեշտելը՝ բոլորովին հակառակ պիտի ըլլար արդէն ազգային շահերուն և իրերու բնական ընթացքին՝ սա որոշ և ընդհանուր օրէնքին համաձայն, որ կը տրամադրէ թէ՛ բոլոր այն փոքրութիւ տարրերը, որոնք, պարագաներու բերմամբ, հիւրընկալուած են քաղաքակիրթ ոստանէ մը, կը ձուլուին և կ'անյայտանան տիրող հոսանքին մէջ:

Ի՞նչ կը ներկայացնէ մեզ այսօր Պուլկարիոյ Հայութիւնը. — հիւրընկալուած, փոքրութիւ տարր մը, միշտ հետևող իր կրթական տեսակէտով. — նեղօրէն տարրին, ինչ որ, ա՛լ աւելի կրնայ փութացնել ձուլումը: Արդէս զի ազգ մը չը ձուլուի, երկու պահանջարար յենարաններ կան ընդհանրապէս. — լեզուն և կրօնը: Լեզուն, որ ազգութիւնը կը պահպանէ, կըրօնը որ զայն կանջատէ: Սակայն ազգութիւնը անվրթար պահելու հարկին մէջ է որ պէտք է կեդրոնանան հիւրընկալեալ ժողովուրդի մը մտածումները և ոչ թէ զայն մեկուսացնելու կերպին մէջ:

Անջատուիլ տիրող տարրէն, կը նշանակէ բոլորովին հեռու մնալ այն քաղաքական և տնտեսական կեանքէն, զոր ան կը վարէ, հեռու մնալ անհատական շահերէ, որուն անվրէպ պէտք ունի ազգ մը, ժամանակակից կազմակերպութեան մէջ իր գոյութիւնը պահպանելու համար: Պուլկարիոյ Հայութիւնը այդ երկու պահանջարար միջոցներէն և ո՛չ մէկուն կառած է. անոր դրութիւնը շեզօք է բոլորովին, և անձնատուր՝ նիւթականի որոնումին միայ, ան կը մղուի աննպատակ հոսանքէ մը, առանց ո՛չ իր ուղղութեան վերջակէտը և ո՛չ ալ միջոցը հասկցած ըլլալու: Իր սիրտին մէջ բիշ մը կրօնքը ունի, այնչափ, որչափէն շատ աւելի անշուշտ իրեն թողած են պապերը. իսկ լեզուն, ժամանակի ազդեցութեան ներքև կը շեղուի ձգտի մերթ ընդ հանրանալու և մերթ՝ օտալ զսան տարուան քաղաքական նոր կեանքին իրեն թողած հարկու հարկիոյ Հայութիւնը, լեզուի վահանը զհանրացումը շատ աղօտ է. ան տակաւին չէ տիրուպետած անանկ ընտանիքներու մէջ իսկ, որոնց երկու գլխաւոր անդամները

զայն հասկնալու և արտայայտելու քիչ շատ ընդունակ են: Եւ, ամեն անգամ որ, այս տխուր երեւոյթին գըլխաւոր պատճառը որոնուած է, մեր ազգային դպրոցները ներկայացած են իրենց բովանդակ մերկութեամբը: զպրօցներ, որոնց նշանակութիւնը, դերը, ստորագրութիւն մը դնել, քիչ շատ կարգաւ սորվիլ ևւ չորս գործողութիւն լուծելու մէջ միայն սահմանափակուած են: Եւ սակայն մեղադրելի էր աս, բանի որ մեր դպրոցական վարիչներուն մտաւորական մակարդակը ատոր միայն կրնար յանգիլ:

Ազգային վերածնութեան մէկ արդիւնքին, Սահմանադրութեան՝ կլթական գործին վերաբերեալ յօդուածը, շատ սխալ յօրինուած է, ոնոր ապակեգրոնացման դրութիւնը տալով: Ի՞նչ կրնար ընել գաւառ մը, հեռու հայութեան հնօցէն, փոքրամիւ, ազէտ անդամներով, անախանձի ի նիւթականով ևւ տարբեր մայրենի լիւզուով: Այս տեսակ կազմակերպութենէ մը միթէ ուրիշ բան կրնա՞ր սպասուիլ, բայց եթէ ան, ինչ որ կը ներկայացնէ այսօրուան Պուլկարահայութիւնը: քսան տարուան նոր կեանքը, տիրող տարրին մշտական ազդեցութեան ներքեւ սակայն՝ փոխեցին հանգամանքները. անո՞ք, այս կարծ ժամանակամիջոցին մէջ, պատրաստեցին, տունն պզտիկ, շատ պզտիկ դասակարգ մը Պուլկարահայերու, որոնք, այսօր, առողջ մտածումներով սնած, առաջդիմութեան ոգին միշտ իրենց առաջնորդ, պիտի մտածեն ու ձեւեն կրթութեան կերպը համանման տիրող տարրին կերպին, որ է երկրին ու միանգամայն քաղաքակրթութեան պահանջը:

ԹՈՐԳՈՄ—ՇԱՀՆՈՒՐ



ՄԱՐՏԷՆ ՅԵՏՈՅ



Կանանչ ու վայրագ՝ ծովը կը պոռայ,
Իր գայրոյթը խուլ, իր ոխը հսկայ:

Անոր մոլեգին կոհակներն անգութ,
Կը ծեծեն տենդով նաւակ մը լքուած,
Որ՝ միջոցին մէջ, մոլոր բիծ մը մուծ
Կը գողգղայ միշտ, ամպերուն դիմաց:

... Կ'անցնին ըրպէնք ևւ պահը՝ հանդարտ,
Տարրերը վայրագ՝ ա՛լ խոնջ, կը նիրհեն.
Եւ ալեակներուն վրայ լուսազարդ,
Կը ծփայ խաղաղ նաւակը նորէն:



Տգէտ ու մոլի ամբոխին վերեւ
Որ փոթորիկ մ'է ինքն իր մէջ յուզուն,
Նոր Գաղափարը՝ կէտ մը արդարեւ
Կը տարուբերի նետերէն անհուն չ:

Չոր մարդկութիւնը բարբարոս, խաւար
Ուժգին կ'արձակէ անխոնջ, անդադար . . .

... Եւ սակայն վաղը՝ մարտը կը զայրի
Մե՞ծ խաղաղութեան հնչակը չորսդին,
Եւ Գաղափարը՝ կը ծփայ՝ բարի,
Մեր գլխուն վերեւ, պայծառ, ժպտագին:

ԱՇՈՏ ԱՇՈՏԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԵՐ

ՊԱՌԿԵԼԷ ԱՌԱՋ ՃԱՇԵԼ

Italia Ferma հանդէսին մէջ, գիտուն մը իր տեսութիւնները կը պարզէ, ամենուս համար շահեկան հարցի մը վրայ: Անիկա երբէք համակարծիք չէ կարգ մը բժիշկներու, որոնք կը կարծեն թէ՛ գիշերային ճաշը ուշ ընելը վնասակար է: Վերոյիշուած գիտունը, ընդհակառակը, կը հաստատէ թէ՛ շատեր նիհար և վատառողջ կըլլան սա՛ միակ պատճառով որ կը՛ղգուչանան իրիկնային ճաշամիջոցին շատ սնունդ առնելէ և մանաւանդ պառկելու մօտ ընթրելէ:

Ինտիստութիւնը մեղի կը արվեցնէ թէ՛ մեր մկանունքները, քունի ատեն, կը կազդուրուին, իսկ արթնութեան ժամանակ՝ երբ կը քալենք կը կը վազենք, մէկ խօսքով շարժումի մէջ կըլլանք, անոնք, մկանունքները, կ'ուժասպառին ու կը յոգնին: Անոնց կորսուած ուժը վերանորոգելու համար սննդառութեան պէտք կայ: Միջօրեայ ճաշերու մարտողութիւնը կը կատարուի քնանալէ աւաջ, իսկ գիշերայինը՝ քնանալու մօտ, սակայն սնունդներու վերջնական մարտողութիւնը, իւրաքրջումը (*assimilation*) կը շարունակուի տա՛լաւին քունի մէջ ալ. հետեւաբար, երբոր բոլորովին պարապ ստամոքսով է որ կը պառկինք, կ'ունենանք անքնութիւն և մարմնոյ աւելորդ յոգնութիւն: «Մարդէն զատ, բոլոր միւս կենդանիները, կըսէ Իտալացի գիտունը, կը կառավարուին իրենց բրնայզներով, և անոնց ամենքն ալ պառկելէ աւաջ, ստամոքսին պարապ չեն ձգեր: Դիեցիկ երախան, միեւնայն բնազդումով, մօրը կուրծքէն կը կախուի, ևւ երբ, երկար ատեն զրկուի սնունդատու կաթէն, իր անհանգստութիւնը կը յայտնէ լալով և ձշելով:

Մարտողական գործարանները հանգստութեան չեն կարօտիր, միայն թէ քսանը չորս ժամուան սնունդի սովորական քանակութիւնը չը չափազանցուի: Ճաշամիջոցները ո՛րչափ որ ալ իրարմէ նուազ հեռու ըլլան, երբէք ո՛ր և է վնաս չեն հասցնել մարդուս. բայց ընդհակառակը՝ անոր ա-

ուղղական վիճակին վրայ աւելի բարերար ազդեցութիւն մը կունենան : Տկար և փափկակազմ մարդիկ և անոնք որ անքնութենէ կը տառապին, պէտք չէ որ պառկին առանց թեթեւ ճաշ մը ընելու :



ԱՂԶԿԱՆՅ ԿՐԹՈՒԹԻՒՆ



Մասնաւոր անհոգութեան մը ենթարկուած է կարծես մեր մէջ, իգական սեռի դաստիարակութեան գործը : Ատեն մը, Պոլիս երբ մեր դպրոցները անճարակորէն կ'ազդուէին ուղղակի ֆրանսական կրթութենէն, առաջ եկաւ թեթեւօրէի դասակարգ մը աղջկանց, անսկզբունք, անորոշ և տարբերապէս անդրական :

Գժբազդ շրջան մըն էր ա'տ հայ ազգին համար : Կարգ մը մարդեր զգացին և դարձանուծի միջոցներուն խորհեցան . այդ միջոցները սակայն շատ միակողմանի էին . շուտով սխալ դաստիարակութեան մը արդիւնքէն, անոնք ուղեցին քոչորովի զրական կրթութիւն մը տալ ան տանն, մեր իգական սեռին, ուղեցին անկա անտեսագէտ տանտիկին միայն շինել :

Հիմայ, աւելի քան երբէք ժամանակն է որ լըրջօրէն նկատողութեան առննք մեր ազգային դրութիւնը՝ հայ դաստիարակութեան ղէկը ի նպաստ անոր կառավարելու համար : Տունի բարի գիւնները չեն բուււեր ա'լ հիմա մեզի, լուրջ դաստիարակութիւն առած մայրեր կուղենք, որպէս զի իրենց բարերար ազդեցութիւնը ունենան նոր սերունդի մը վրայ, զոր յղկելու և պատրաստելու համար հայ ժողովուրդը պէտք է ունենայ ինչպէս :

Սխալը հոն է որ կրթութեան կերպը չենք բարեխառնած . լուրջ դաստիարակութիւն սալ ըսելով՝ ըմբռնած ենք միայն աւել աւել, կերակուր եփող և անտեսագիտութիւն գիտցող աղջիկներ առաջ բերել : Չենք կրցած անոնց ընտանեկան պէտքերուն ուսումնասիրութեանցը կցել նաև հանրութեան օգտակար անդամներ ըլլալու գաղափարը : Այս վերջինը, տրամաբանօրէն, առիթ պիտի տար, որպէս զի իտէալական աղջիկներ ունենայինք, աղջիկներ, որոնց փափաքն ու կամքը, իրենց ստացած ամուր դաստիարակութեան շնորհիւ, անպարար պիտի ձգտէին գէպի բարձրագոյն կրթութիւն մը, ինչպէս ըսի, մէյմէկ օգտակար անդամուհիներ դառնալու մարմաջով :

Նոր սերունդին առջև ահագին պարտականութիւններ ունինք . պատասխանատուութիւնը շատ մեծ է, երբոր հիմակուրէն չը պատրաստութիւնք նպատակայարմար յատակագիծ մը ձևել կրթական գործին, ուրկէ իգական նոր սերունդը դուրս գայ, գէթ այրերուն չափ, լուրջ, տեսլապաշտ ու բաւական բարոյական առնութեամբ, պատրաստուելու և յեղաշրջում մը առաջացնելու համար հայ իգական սեռին լծացած կեանքին մէջ :

ԱՐՄԱԻՆԻ


ԾԱՂԿԵՓՈՒՆՋ

ՄԻՂԼԷԻ ՀԱՐԻՐԱՄԵՆԱԿԸ. — Պատմաբան Միլլէի հարիւրամեակին հանդէսը տեղի ունեցաւ Յուլիս 12ին, Բէռ Լաչէզի մէջ : Վարպետին դամբանին առջև, խուռն բազմութեան մը ներկայութեանը շատ մը ատենախօսներ անոր դործը և անոր կարևորութիւնը շեշտեցին : Մէջ կը բերենք Պ. Բօլ Մօռէլի բանախօսութեան սա քանի մը տողերը, ուր ճշմարիտ յուզման շեշտ մը կայ :

« 82ի մասնախումբն էինք, երկուսսարդութեան պատգամաւորները, և, քողը իյնալուն պէս, տեսանք, մե'նք, առաջիններս, ինչպէս Մէրօիէ տուած էր մեզի, սիրելի դէմքը՝ ալեւոր վարպետին, և ա'յն գլուխը՝ կեանքէն խոնջաբեկ, որ կը քնանայ յաւիտենական հանգիստին երջանիկ, անվերջ խաղաղութեանը մէջ : Գամբանական մահիճէն վեր, Մուսան կը կանգնի, լուսաճաճանչ, իր բովանդակ մեղամաղձութեանը մէջ :

Նայեցէ՛ք անոր : Միլլէի ներշնչիչն իսկ է ան : Մանր և զօրաւոր Մուսան է, ճակատը խիստ, ճակատը՝ որ կը խոկայ, ճակատը որ կը պահանջէ, շրթունքները՝ որ պերճախօս են, մեծաթուիչ : Ան կը թողու երկիրը, ձեռքը կարկառուն դէպի գերագոյն ճշմարտութիւն մը . ան Մուսան է պատմութեան, և, պատմութիւնով՝ նոր կեանքի : Միլլէ այնչափ սիրած է ժողովուրդը, այնչափ գեղեցիկ գործածած է բոլոր վայրկեանները իր գոյութեան և համբաւին ծառայելու խոնարհներուն, որոնք, երէկ, մեն' առաջ, եկած են յարգանքով այցելել այս մահարձանին, և այսօր ալ, բանաստեղծին հրաշալի քերթուածին պէս :

«Ամբողջ ժողովուրդի մը ճայնը զինքը կ'օրէ իր դամբանին մէջ» :



Յուլիս 13ին ալ, Բանդէոնի մէջ պաշտօնական հանդէսը տեղի ունեցաւ ի պատիւ մեծ պատմաբանին : Մէկ քանի ատենախօսներէն յետոյ, Պ. Նալառ, ընկերվարական բրէֆէ, ամփոփ եւ գեղեցիկ բանախօսութեան մը մէջ, ամբողջ Միլլէն գծելէ յետոյ, իր խօսքը կը վերջացնէ սա տողերով . «Յեղափոխութեան մէջ է որ Միլլէ կը փնտռէ ա'յն լոյսը, որ իրեն համար, պիտի լուսաւորէ անցածը և ապագան Փրանսային :

«Չայն կը նկատէ ազատագրիչ ու տիեզերական : Միրայօժար պիտի ըսէր Լամաութիւնն հետ :

«Ալ ծովերը, աստիճանները, գետերը չեն Որ կը բաժնեն ժառանգութիւնը մարդեւորուն միջև,»

Անոնց միակ սահմանագիծերը՝ սահմաններն են հիմա միտքերուն. Աշխարհ լուսաւորուելով դէպի միութիւն կը բարձրանայ: Իմ հայրենիքս ամենուրեք է, ուր Փրանսան կը ճառագայթէ, Ուր իր հոգին կը փողփողի շլացած նայուածքներու մէջ, Ես՝ համաքաղաքակից եմ ամէն անոնց որ կըսեն. Իմ հայրենիքս ճշմարտութիւնն է:»

«ժողովուրդը ապերախտ չէ, ան շերմապէս կը սիրէ անոնք, որ զինքը սիրած են. կերթայ անոնց ապահով եւ ինքնակամ բնազդումով մը, մեծապէս կը հետաքրքրուի անոնց գործերովը, մեծապէս կը դուրգուրայ անոնց անձին, մեծապէս կը յարգէ անոնց անունը:

«Ահա թէ ինչո՞ւ, միաթուիչ, ամբողջ Փրանսան կը փառաբանէ այսօր յիշատակն իր մեծ պատմաբանին և իր մեծ բարեկամին:

«Ո՛չ ոք աւելի քան Միշլէն կը հաւտար բեղմնաւոր զօրութեանը՝ ժողովրդական բնազդումին: Ո՛չ, Փրանսան չէ խափուած Յեղափոխութիւն ընելով: Ո՛չ, այն մեծ ժողովուրդը որ զայն ի կատար հանած է, խաղալիքը չէ եղած սին ցնորքներու: Հետեւինք մեր ճամբուն, ճշմարտութեան եւ արդարութեան ուղիին մէջ, ներշնչուինք մտածումէն ու սիրտէն Միշլէն, որ Փրանսայի մէջ կը տեսնար «Մարդկութեան նաւին ուղեցոյցը»:

»»

ՋՕԱՅԻՆ ՇՈՒՐՔ. — Զօլայի դատը տեղի ունեցաւ այս անգամ Վէրսայի մէջ: Մեծ վիպասանը հոս ալ ենթարկուեցաւ այն դատապարտութեան, զոր արդէն վճռած էր Սէնի ատենը, — Մէկ տարուան բանտարկութիւն եւ 3000 ֆրանք տուգանք:

«Երեք քաղաքներ»ուն հեղինակը հեռացած գացած է հիմայ Փրանսայէն չը գիտցուի որ: Իր մեկնումին առթիւ հետեւեալ բացատրութիւնը հրատարակած է Օռօռի մէջ, զոր թարգմանաբար արտատպելը աւելորդ չենք համարիր.

ԱՊՍՅՈՅՅԻ ՀԱՄԱՐ

Սէն-է-Սուզի ոճրադատ ատենանին մէջ, երբ, բացակայութեան դատուած, եւ կանխաւ դատապարտուած էի, միմիակ ստորագրութիւն մը կը բաւէր ինձի համար, ատենագիրական տուժարի մը մէջ, զերծ մնալու ամէն դատապարտութենէ:

Բայց ես ի՞նչ ուզեցի: Ես ուզեցի մեծ վէճ մը գրգռել հարցի մը վրայ, որ խեղճերը կը խռովէր, արտաբերել ապացոյցները ճիւղային ան-

հաւատարութեան մը, որ կը յանգի դատատանական գարշելի մոլորումին:

Փետրվար ամսուն՝ ազատ վիճաբանութիւն չի կար: Պաշտպանութի շանքերուն միակ նպատակն էր ը՛դունիլ տալ ուղղամիտ բանակաւ մը, ուր իմ նամակս ամբողջ վէճի առարկայ դառնար: Ես ոչինչ փոխած եմ: Ես միշտ կուզեմ ցոյց տալ ապացոյցներս, գրգռել հակաճառութիւնը, լոյսը ցայտեցնել: Ես պահանջեցի իմ այն իրաւունքս, որ կը կայանար՝ յօդաւոր իրողութիւնները ամբողջ ապացուցանելու մէջ: Մերժեցին զիս մտիկ ընել: Յետաձգում մը պահանջեցի, այս կէտը դատի առաջիկայ ընելու համար վճարեկ ատենանին առջև: Մերժեցին յետաձգումը: Ամէն բան կը կայանար զիս բռնի հարկադրելու մէջ վճռական, վերջնական բանավէճի մը, ուր անկարող ըլլայի ճշմարտութիւնը երևան բերել: Իստին բացակայ եղայ: Ես կը պահանջեմ քննիչ յանձնախումբին առջև բացատրութիւն տալէ առաջ, որ վճռաբեկ ատենը իր կարծիքը յայտնէ այն միակ հարցին վրայ, որ ինձի համար կարեւոր է, — իմ ապացուցանելու իրաւունքիս:

Կը պահանջեմ նաեւ որ, Իրքառի բողոքին վրայ էսթէրհայիին դէմ բացուած քննութիւնը, երևան բերէ մեղաւիցութիւններ, զոր՝ արդարութեան ամբաստանելու իրաւունքը չունիմ տակաւին ես: Բայց այս ամէնէն կատարութիւնը կը վախնայ: Այս կատարեալ բանակաւին՝ Պ. Պրիտոն, Պ. Մէլինէ աւելի չը փափարի: Ինձի դէմ ընդունուած ուղղութիւնը պարզ է. առանց իմ ներկայութեան՝ որոշել անմիջապէս կատարուելիք դատը, եւ ստիպել զիս 15 օրուան մէջ դառնալ Վէրսայ, հոն ալ իմ վկաներուս բերանը գոցելու համար սա անասնական բառերով. — հարցը մէջտեղ չի պիտի գրուի:

Եւ, խաղալու համար մա՛օլրան, պէտք էր խոյս տալ «օրնական զեկոյց մը ընելէ եւերակային», այսինքն, յայտնապէս խօսելով, այնպէս մը կարգադրել զայն որ, Պ. Պրիտոնի բարապանը զիս տունը չը գտնայ իր կոշնագիրը ինձի բերած ատենը: Բանտէն փախիլը խնդիր չէ: Իստը կարեւորութիւն չունենար, քանի որ ամէն մարդ գիտէ թէ բացառիկութիւնով եղած դատապարտութիւն մը միայն ժամանակաւոր կըլլայ: Ինդ իրը հարկաւոր միջոցները գործադրելն է, որպէս զի լոյսը վերջնապէս կարելի ըլլայ ցայտեցնել այն դատին մէջ որ արդէն կը լմնայ: Ընդունիլ հեղձամահ բանավէճ մը, տուանց ամէն բան ընելու ապացոյց: յայտնութեան համար, սա վերջի վեց ամսուան երկար ճիգը փճացնել պիտի ըլլար:

Կը կարծեմ թէ բանի մը յանգեցուցի: Ի՛նչ որ ալ պատահի, գալիք Հոկտեմբերին, «արձակուրդէն յետոյ», նորէն իմ դատաւորներուս առջևը պիտի ըլլամ: Անգամ մըն ալ պիտի ընծայեմ ապացոյցը: Անգամ մըն ալ Փրանսան պիտի տեսնայ այսօրուան անապարձիկ մարդերը, որոնք լոյսէն կը փախչին:

Մաղկափայ ԷՄԻԼ ԶՕԱ